



## ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թևմի)

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*

**63. Գրիգոր Գ Պահլավունի (1113—1166).**—Ապիրատ իշխանի որդին և Ներսէս Շնորհապու ավագ եղբայրը: Ծորչ քանի տարեկանին բարձրանում է հայրապետական գահը: Պահակարուտ է 53 տարի:

«Գրիգոր կիթողիկոս հայոց հասեալ ի բարոր ծերութիւն... փոխեցաւ յատեացս երանեկին Գրիգոր յամի Տեառն 1166 և ի թուականութեան հայոց Ռժե կամ ՌժԴ. և թաղեցաւ անդ ի Հոռմկայ ի շիրմին՝ զոր պատրաստեալ էր նորա յառաջագոյն»<sup>135</sup>: Անեցին, խոսկով Գրիգոր Գ-ի թաղված տեղի մասին, գրում է: «Այս տէր Գրիգորին արկանի հիմն ի Կըայն, և շինէ հոյակալ եկեղեցի ի հմանութիւն արևելից տաճարացն. պատրաստեալ ի նմա զդիրս երկուց տորք Լուսարչացն զիօրելրարցն իրոց, տէր Գրիգորիսի և Ներսէսի»<sup>136</sup>: «Գրիգորիսի գերեզմանը հարկավ եղավ Հոռմկային

կաթողիկեին մոտը, զոր ինքն էր շինած և որ իրմէ ետքը թաղվեցան Հոռմկայ նատող կաթողիկոսները, դար մը ամբողջ»<sup>137</sup>: Շահիապետնան պրազմանը այս հարցի մասին նույն է վկայում: «Գրիգոր Գ Պահլավունին որդի իշխանին Ապիրատայ, թոռն Գրիգորի Մագիստրոսի և քեռորդի Վկայաւերի... փոխի հաստեացս՝ մնալով ընդ ամենայն ի հայրապետութեան զամս յիսոն և երեք. որոյ զմարմին ամփոփի անդէն ի Հոռմկայ ի տապանին յիրմէ պատրաստելոյ յառաջագոյն»<sup>138</sup>: «Սրբափառ վարքով և լի առաքինի արդեամբ փոխեցաւ առ Քրիստո եօթանասուներեք տարուան յամի 1165 և թաղեցաւ փառօք ի Հոռմկայ»<sup>139</sup>:

**64. Ներսէս Դ Կրայեցի (1166—1173).**—Կոչվում է նաև Շնորհալի: Որդի Ապիրատ իշխանի, եղբայր՝ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի:

Ապրել, զործել և թաղվել է Հոռմկայում: Անեցին հաղորդում է, որ Շնորհալին թաղ-

<sup>135</sup> «Ազգապատում», մասն Ա, էջ 1390:

<sup>136</sup> Շահիապետնանց, թ. Ա, էջ 202—203:

<sup>137</sup> Հ. Մ. Բժշկացի, «Համառու մելարագիր վարուցիւնի արանց», Վեմետիլ, 1850, էջ 234:

\* Հարունակված «Էջմիածն» ամսագրի 1971 թվականի №№ Ա, Գ, և Դ-ից:

<sup>135</sup> Հ. Մ. Համբարձում, «Պատմություն հայոց», թ. Գ, էջ 82:

<sup>136</sup> Սամվել Անեցի, էջ 139:

վել է Հոռովայրում, «Փոխի մահուամբ առ Քրիստոս տորեն Ներսէս և յաջորդէ զաթոռորն տէր Գրիգոր՝ Եղբօրորդին նորին տղականական ամս ի: Այս տէր Գրիգորին արկան է հիմն ի Կրայն, և շինէ հոյակապ եկեղեցի ի համանութիւն արևելից տաճարացն, պատրաստեալ ի համա գդիրս երկուոց սուրբ Լուսատրչացն իրոց, տէր Գրիգորին և Ներսէսի»<sup>140</sup>: «Անքննեալի տեսչութեամբն Սաստուծոյ, եհան նմա հրաւեր երկանացն կոչման, և եկն ի վերայ նորա հիանդութիւն ծանր, որով վախճան հասեալ երշանիկ կենաց նորա ի հասալի իր ՀԵ ամաց, փոխեցաւ առ անձելալին իր Քրիստոս յամի տեառն 1173 և ի թուականութեանս հայոց ՈՒԲ, յաւուր հինգշարժի ի ԾԳ, ամսեանս օգոստոսիս... և սուգ մեծ առեալ ի վերայ մահու նորա, մեծաւ հողարկառորդթեամբ և բազմութիւն ժողովրդեան տարեալ եղ զնա ի դամբարանի անդ որ ի Հոռովայ՝ առ եղբօր նորին Գրիգորիսի»<sup>141</sup>.

«Թողեալ յետ իր զարժանաւոր վաստակու կալով ի հայրապետութեան զամս եօթն՝ փոխի հաստեաց յանդրանկացն խորան ի 13 օգոստոսի յաւուր հինգշարժի, և մարտին ամփոփեցաւ ի տապահի առ եղքօր իրում ի Հոռովայ»<sup>142</sup>: «Ծնորհային թաղումը ամենայն շրեղությամբ կատարվեցավ Գրիգոր Ապիքրատ եպիսկոպոսին զիխավորությամբ, որ Լամբրոնացին ալ խոսեցավ դրուատ պատմագրաքար ի յաստուածանրաւը Գրիգոր նորին, իսկ մարտինը թաղվեցավ Հոռովայի կաթողիկեն հովանվույն ներքն, յոր եղբօր Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի գերեզմանին մոտ»<sup>143</sup>:

65. Գրիգոր Դ Տղա (1173—1193).—Ներսէս Ծնորհայու Վասիլ եղբօր որդին էր և յաջորդեց յոր նորեղբօրը՝ Ներսէս Ծնորհայուն:

Սահման և թաղման մասին կան տվյալներ. յաղվել է Դրազարկում. «Թաղեցաւ ի Դրազարկու»<sup>144</sup>, —ասում է Սմբատ պատմիչը: Նրան հետևում է Սամվել Անեցին, գրելով «Եւ զկնի ինքն ևս փոխի մահուամբ առ Քրիստոս և կայ հանկուցեալ ի սուրբ ովա-

տըն Դրազարկ»<sup>145</sup>: Հակառակ այս վկայություններին, Բ. Մ. Զամշյանը գրում է, որ Գրիգոր Տղան թաղվել է Հոռովայրում. «Բարեկարասակ յաջորդն և եղբօրորդի Ներսիսի Ծնորհալոյ՝ Գրիգոր Դ՝ մականուանեալն Տղայ, կայեալ զաթոռ հայրապետութեան հայոց ի Հոռովայ ամս ի կամ ԾԹ և ամիսս 11 սրբութեամբ և իմաստութեամբ, և հասեալ ի վախճան կենաց՝ իր վաթսուն ամաց հասակի փոխեցաւ յաստեաց ի թոփն հայոց ՈՒԲ, յամեանն յովիսի, և թաղեցաւ անդէն ի Հոռովայ առ գերեզմանի հօրեղբար իրոց Գրիգորիսի և Ներսէսի»<sup>146</sup>:

Օրմանյան սրբազնություններին նույնական ընդունում է, որ Գրիգոր Դ-ն թաղված լինի Դրազարկում: «Գրիգոր Տղայն Հոռովայի մեջ թաղված ըստմները, ալբրու չեն ցուցուցած»<sup>147</sup>: Սյոյ մասին հստակորեն վկայում է նաև Բ. Ղ. Ալիշանը. «Է սոյն քնարանս Դրազարկու ամփոփեցաւ մեծոցի կաթողիկոսն Պահլավիկ Գրիգոր Տղայ՝ (25 մայիսի 1193), մեծագույն և նախանձելույն ձեռամբ Ն. Լամբրոնացույ, որ և աւանդեաց մեզ զայս լիշատակ»: «Անդ յանցուցաք զնա, ասէ, ի տապանի, սպասաւորութեամբ իմ Ներսիսի, և բարեպաշտ իշխուի մերոյ Լևոնի»<sup>148</sup>: Հ. Ղ. Ալիշան իր «Հայապատում» աշխատության մեջ դարձալ վկայում է, որ Գրիգոր Տղան թաղվել է Դրազարկուում<sup>149</sup>:

66. Գրիգոր Ե Քարպակ (1193—1194).—Գրիգոր Դ Տղայի մասնահասակ քեռորդին: Գահակարում է մեկ տարի և հինգ ամիս:

Կիրակոս Գահաձակեցին<sup>150</sup>, Սմբատ պարապետ<sup>151</sup>, Վարդան պատմիչը<sup>152</sup>, Սամվել Անեցին գրելով դժբախտ կաթողիկոսի մահվան տակուր մանրամասնությունները, վկայում են, որ նա Դրազարկում է թաղվել. «ՈՒԾՂԶ: Տէր Գրիգորիս միս ալ եղբօրորդի նորին Տեառն Ներսիսի ամս Բ և քարավելծ

<sup>140</sup> Սամվել Անեցի, էջ 189:

<sup>141</sup> Հ. Մ. Զամշյան, «Պատմություն հայոց», Բ. Գ, էջ 110—111:

<sup>142</sup> Չահիսարությանց, Բ. Ա., էջ 203—204:

<sup>143</sup> Օրմանյան, «Ազգապատում», Բ. Ա., էջ 1436—1437:

<sup>144</sup> Տարնգիրք արարեալ Սմբատայ սպարապետի հայոց որդու Կոտանդնի կոմիսի Կոտիկոսայ (նրան Կարապետ վրդ. Ծամբազրյանի, Փարիզ, 1859 թ., էջ 106):

<sup>145</sup> Սամվելի քամանայի Անեցոյ «Հաւաքմունք ի գործ պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 139:

<sup>146</sup> Հ. Ղ. Ալիշան, «Պատմություն հայոց», Բ. Գ,

էջ 150: (Օմիսաթունյանը նույնական ընդունում է, որ

Գրիգոր Դ թաղվել է «Հոռովայ առ շիրիմի նորեղբար իրոց», Բ. Ա., էջ 204):

<sup>147</sup> «Ազգապատում», մասն Ա, էջ 1492:

<sup>148</sup> Հ. Ղ. Ալիշան, «Սիստան», Վենետիկ—Ա. Ղազար, 1885, էջ 282:

<sup>149</sup> Հ. Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, Ա. Ղազար, 1901, էջ 412:

<sup>150</sup> Կիրակոս Գահաձակեցի, «Պատմություն հայոց», էջ 147—148:

<sup>151</sup> Սմբատ Սպարապետ, «Տարնգիրք», Փարիզ, 1859, էջ 107:

<sup>152</sup> Վարդան Վարդապետի, «Հաւաքմունք պատմության», Վենետիկ, 1862, էջ 139:

լեալ ի ողեկէն Կօպիտառոյ՝ և կայ ի Դրա-  
զարկն հանգուցեալ»<sup>153</sup>:

«Գրիգոր Ե ... անդէն վախճանեցաւ և թա-  
ղեցաւ ի Դրազարկն. կացեալ յայն աստի-  
ճանի ամ մի և ամիս հինգ»<sup>154</sup>:

Հ. Ալիշանը ևս հաստատում է նույնը,  
Քարավեժի շիրմատեղը համարելով Դրա-  
զարկը. «Առ նիմի երա (Գրիգոր Դ Տղայի  
կողքին.) յետ երկու ամաց մոռը և տիջը  
տղայ կաթողիկոս Գրիգոր Քարավեժ  
(1195) նույն դամբարանի Հեթմոյ արքա-  
յի»<sup>155</sup>: Նույն է վլայում ևս Հ. Ս. Չամչ-  
յանը. «Եկաց ի կաթուլիկոսութիւն ամ մի և  
ամիս 5 և թաղեցաւ ի Դրազարկն»<sup>156</sup>: «Այս  
նախակող կատարելապես կաթողիկոսա-  
կան հոդարկավորություն կատարվեցալ, և  
Քարավեժի մարտինը Դրազարկ վանքը  
թաղվեցավ»<sup>157</sup>:

67. Գրիգոր Զ Ապիրատ (1194—1203).—  
Սա Շնորհալոյ Շահան եղբոր որդին էր:

Վախճանվում է Սոսում: Նրանով վերջա-  
նում է Պահլավունյաց տոհմի քահանաբա-  
պետությունը: «Մարմինը թաղվեցավ Արքա-  
կադեմի վանքին մեջ, որուն սուրբ Խճկուր  
անունն ալ կը տրվի, և հարկավ հոն կը  
մնար Սիս գալեն եսոքը, իբրև հայրապետա-  
նոց ըլլալու վանք մը»<sup>158</sup>: «ՈՒԾՂԸ (ՈՒԲ)  
Տէր Գրիգոր Ապիրատ վախճանի ի մայրա-  
քաղաքն Սիս, կացեալ յատոռ հայրապետու-  
թեան՝ ամս Հ: Մեռանի անդէն ի Սիս սուրբ  
Խճկուր, զոր ովստ Արքակադեմի անձն»<sup>159</sup>:  
Նույն հաստատում է ևս Շահանաթուն-  
յանց սրբազնը<sup>160</sup>:

68. Հովհաննես Զ Սսեցի (1203—1221).—  
Կոչվում է ևս Մեծարարու կամ Ծոն: Հե-  
թումյան գերդաստանից: Ազգական կոսն Բ  
թագավորի և արքակադեմոս Սսի:

Մահիվան և շիրմատեղի մասին կամ իրա-  
րամեր կարծիքներ և փաստեր, այսպես.  
«ՈՒՄԻՍ: Ի ՈԿԸ. ամիս վախճանի կաթողի-  
կոսն տղը Յովհաննես և դիմի ի Դրազար-  
կըն»<sup>161</sup>: Հ. Ս. Չամչյանը վկայակոչելով Կի-  
րակոս, Վարդան, Մաղարիս, Վահրամ  
պատմիչներին, Հովհաննես Մեծարարուի  
շիրմատեղը համարում է Հովհաննա. «Ընդ  
այն ժամանակն մեռա կաթողիկոս Յով-

հաննես Մեծարարոյ և թաղեցաւ ի Հովհաննայ,  
կացեալ հայրապետութիւն ամս ԺԸ»<sup>162</sup>: Հ. Պ.  
Ալիշանի կարծիքի համաձայն նա թաղվել է  
Դրազարկում. «Անդ ամփոփեցաւ (1220)  
լայնաստարածն արտի և ձեռօք անուանեալն  
Մեծարարոյ Յովհաննես է կաթողիկոս  
(պետք է լինի Հովհաննես Զ)»<sup>163</sup>:

69. Կոստանդին Ա. Բարձրաքերդցի  
(1221—1267).—Գահակալում է 46 տարի:

Սանը և թաղումը Դրազարկում. «Ի դա-  
ստե կաթողիկոսաց աստ հանգուցան և ծե-  
րունին Կոստանդին Ա. Բարձրաքերդցի  
(1266)<sup>164</sup>: «Բացին զիո՞ր տէր (Կոստանդին  
Բարձրաքերդցի կաթողիկոսին) գտան  
զշուրշառն փտած, և զպալին խայտնին  
շէն, և զգաւազան և զմազն. և ուկր ամե-  
նեակին չգուտան»<sup>165</sup>:

70. Հակոբ Ա. Կլայեցի (1268—1286).—

Նաև աւեցի, տարսունացի, մեծքարեցի:

Հայ Օրինանան սրբազնի թաղման վայ-  
րը համարվում է Հովհաննան. «Մահվանը մա-  
սին ոչ մի մանրամասնություն չտնինք.  
բայց Հովհաննայի մեջ հանդիպած պիտի ը-  
սենք, և հականաբար նոյն տեղ ալ թաղ-  
ված»<sup>166</sup>:

71. Կոստանդին Բ Կատուկեցի (1286—  
1289).—Կոչվել է ևս Պրունագործ: Վախ-  
ճանանի և թաղվել է Ակեռա վանքում:

72. Ստեփաննես Դ Հովհաննայեցի (1290—  
1293).—Վախճանանիում է գերության մեջ՝ Ե-  
գիպոտոսում, 1293 թ.: Թաղվել է Կահիրեկի  
հապեշ-աստրոց եկեղեցում. «Վախճաննեցաւ  
ի նմին երջանիկ և փառատրեալ կաթողի-  
կոսն տէր Ստեփաննու: Եւ առեալ քրիստո-  
նէցն հրաման՝ տարան յեկեղեցի հաբաշի  
Աստրեացն. և պատուվ եղին ի հանգըս-  
տի»<sup>167</sup>: «ՈՒՊՂԵ: Ի ՉնԲ. թվին՝ նկն  
Մելիք Աշրաֆ տղատան Մըսրոյ բազում  
օրոք ի վերայ Հովհաննային. և պաշարեաց  
զնա բազում ատորս՝ մինչն էտ և տարա-  
գուէր Ստեփաննու կաթողիկոս և զաջ սուրբ  
Լուսատրչին գերի ի Մար. բազում եափսկո-  
պոսօք քահանայից և ժողովրդօք և կեցեալ  
անդէն տարի մի վախճաննեցաւ»<sup>168</sup>: «Ստե-  
փաննու կաթողիկոս՝ որ գերեցաւ յեգիպ-  
տոս կացեալ ի վտարանդութեան իւրում ամ

<sup>153</sup> Սամվել Անեցի, էջ 143:

<sup>154</sup> Նոյն տեղում:

<sup>155</sup> Հ. Պ. Ալիշան, «Սիսուան», էջ 282:

<sup>156</sup> Հ. Պ. Չամչյան, «Պատմություն նայոց», թ. Գ, էջ 160:

<sup>157</sup> Օրմանքան, «Ազգապատում», թ. Ա, էջ 1509:

<sup>158</sup> Նոյն տեղում, էջ 1550:

<sup>159</sup> Սամվել Անեցի, էջ 144:

<sup>160</sup> Շահիսարությանց, թ. Ա, էջ 205:

<sup>161</sup> Սամվել Անեցի, էջ 148:

<sup>162</sup> Հ. Պ. Չամչյան, «Պատմություն նայոց», թ. Գ, էջ 193:

<sup>163</sup> Հ. Պ. Ալիշան, «Սիսուան», էջ 282:

<sup>164</sup> Հ. Պ. Ալիշան, «Սիսուան», էջ 282:

<sup>165</sup> Նոյն տեղում:

<sup>166</sup> «Ազգապատում», մաս Բ, էջ 1691:

<sup>167</sup> Ստ. Օրբելյան, «Պատմություն նայանային Սի-  
սուան», Թիֆլիս, 1912, էջ 444, 503:

<sup>168</sup> Սամվել Անեցի, էջ 153:

մի՝ մեռա ի ցացց սրտին»<sup>169</sup>: «Գաճիրեի մեջ եղող քրիստոնյաներ, զորս տեղացի դփտիներեն ավելի այստեղ գտնվող հայերուն վրա ի դեպ է իմանալ, հաջողության հրաման առանալ բանտարկյալ կաթողիկոսին արձանավոր թաղումն ընելու, և տարան հեղեղեցի Հարաշի Աստրյացն, և այն տեղ պատվով եղին ի հանգատի: Որոց տեղեկություններ կը պահին հիշված եղեղեցին և Ստեփանոսին գերեզմանին վրա, իսկ մահվան թվականը պետք է հշանակել 1293, գերութենե տարի մը ետքը»<sup>170</sup>:

73. Գրիգոր Է Անավարդեցի (1293—1307).—Նաև՝ մեծքարեցի՝ Հայրապետական Աթոռը Հոռմիկայից փոխադրում է Սիս, որ և վահանակում ու թաղվում է:

74. Կոստանդին Գ Կեսարացի (1307—1322).—Հավականար թաղված է Սսում:

75. Կոստանդին Դ Լամբրոնացի (1323—1326).—Կոչվել է նաև Դրազարկցի, նախապետ Դրազարկի արքեպիսկոպոս եղած լինելու պատճառով: Թաղման վայրը՝ Դրազարկը. այդ մասին հաղորդում է Սմբատ սպարապետը. Սմբատ սպարապետին հետեւում են հետագա հետազոտությունը: Այսպէս՝ Բ. Ղ. Ալիշան. «Ի դասուէ կաթողիկոսաց աստ (Դրազարկ) հանգուցան՝ և ծերունի Կոստանդին Ա Բարձրաքերդցի (1264) և Կոստանդին Գ Լամբրոնացի (1327)»<sup>171</sup>:

Օրմանյան սրբազնը գրում է. «Ասոր (Կոստանդին Գ Լամբրոնացի) ալ գերեզմանը եղած է Դրազարկի վանքը, որում առաջնորդությունն ալ վարած էր: Տարօրինակ պարագա մը կը հիշէ Սմբատի շարունակողը թաղման առթիվ: Երբոր, կըսէ. «քացին զինուրքն տէր Կոստանդին Բարձրաքերդցի կաթողիկոսին նա գտան զշորշառն փտած, և զպավին խայտնին չեն և զգաւագնն և զմագն. և ոսկի ամեննին չգտան»: Առաջին դիտելու կետն այն է, թե ինչո՞ւ և ինչպէ՞ն հառաջագույն վահանանած կաթողիկոսի մը գերեզմանը կը բանան: Պատմիշը կը ներ, որ նոյն գերեզմանին մեջ նոր վահանանած կաթողիկոսը պիտի դնենին, ինչ որ հավանական նեթադրություն մըն է, բայց տարօրինակ սովորություն մը օրինակ կը ներկայանա: Այսու կողմեն դյուրին ալ չէ պարզ հետաքրքրական նպատակ մը ենթադրել, հախնեաց ուկորտիքը զննելու կամ տեղափոխելու համար, վասնիք այն ատեն

<sup>169</sup> Հ. Մ. Զամշյան, «Պատմություն հայոց», Բ. Գ., էջ 289:

<sup>170</sup> Օրմանյան, «Ազգապատում», Բ. Բ., էջ 1736—1737:

<sup>171</sup> Հ. Ղ. Ալիշան, «Սիսուան», էջ 232:

պետք չէր ըլլար ուրիշ կաթողիկոսի մը մահվան սպասել, մինչ Բարձրաքերդցին գերեզմանը բացած են. «Յորժամ մեռա Տէր Կոստանդին Լամբրոնացի կաթողիկոսն և տարան ի Երազարկն: Խսկ գերեզմանին մեջ եղած նյութերեն ուսանց մնալը, յորաքանչյուր հյութին տոկունության հետևանքն էր, թաղվելն 60 տարի ետքը դիմանալու շափ: Սիսկ սքանչելիք կաթովկած է ուկը չգտնվիլը: Իրավ ուկրեներեն ալ կրնան հողին մեջ փոխի, ալ դժվարավ 60 տարվա միջոցին մեջ. բայց եթե շատ տկարակազմ ըլլար, ինչ որ չենքադրվել Բարձրքերդցին պես երկարատև աշխատության դիմացոյ անձի մը վրա: Ժամանակակիցներուն մասին ըսկած է, թե ի փառք տուին Աստոծոյ, որ առեւ սքանչելս ի սուրբս, որոնք թերևս մարմնն վերափոխում մը մեկնած ըլլան: Խսկ մենք անմենենի պարագա մը կը թեսնենք, և անհիմն զրուցի մը արձագանք կը կարծենք պատմվածը»<sup>172</sup>:

76. Հակոբ Բ Անավարդեցի (1827—1341).—Կոչվել է նաև տարտոնցի:

Սահման և թաղման մասին ոչ պատմշները և ոչ հետագա հետազոտությունը ոչ մի բան չեն ասում: Ամենայն հավանականությամբ թաղվել է Սսում:

77. Միհիթը Ա Գոներցի (1341—1355).—Վահմանվել է 1355 թին «վերջին գտեալ ի վեհական կաթողիկոսուն մեր»<sup>173</sup>: Ակնարկությունը՝ կաթողիկոսների դաշբարանում Սսում:

78. Մեսրոպ Ա Արտազեցի (1359—1373).—Վահմանվում և թաղվում է Սսում. «Եւ ի նոյն ասոր մեռան նա ինքն Մեսրոպ կաթողիկոսը (1372) կացեալ ի հայրապետություն ամս՝ ԺԿ»<sup>174</sup>:

79. Կոստանդին Ե Սսեցի (1372—1374).—Թաղվել է Սսում<sup>175</sup>:

80. Պողոս Ա Սսեցի (1374—1382).—Վահմանվել և թաղվել է 1382 թվին Սսի կաթողիկոսաց շարքում:

81. Թեղորոս Բ Կիլիկիացի (1382—1392).—Մելիք Օմարի ձեռքով չարչարանքներուն սպասնում է 16 տաճուտերերի հետ միասին, 1392 թ. Սսում և թաղվում այստեղ. «ՌՅՂԵ: Ի Դիմք թվին զտէր Թեղորորոսն ի Սիս սպանին»<sup>176</sup> և նոյն տեղում էլ թաղեցին հայրապետանոցի գերեզմանոցուն:

<sup>172</sup> Օրմանյան, «Ազգապատում», Բ. Բ., էջ 1841—1842:

<sup>173</sup> Հ. Ղ. Ալիշան, «Սիսուան», էջ 147:

<sup>174</sup> Հ. Մ. Զամշյան, «Պատմություն հայոց», Բ. Բ., էջ 353:

<sup>175</sup> Նոյն տեղում:

<sup>176</sup> Սամվել Անեցի, «Ժամանակագրություն», էջ 172:

**82. Կարապետ Ա. Կեղեցի (1393—1404).**—Սպանվել է թունավորմամբ Սսում, որ թաղվել այնուել:

**83. Հակոբ Գ Սսեցի (1404—1411).**—«Նոյնպէս և Ցակոր կաթողիկոս Սսոյ զկնի փոքր ժամանակի վճարեցաւ ի կենաց, զի ուսանը ի միաբանից հայրապետանոցին՝ որք չէին հանեալ ընդ նա, դեռ մահու արքուցեալ՝ լուծին զնան ի կենաց, յետ կարոյ նորա յիշխանութեան ամս Բ»<sup>177</sup>:

**84. Գրիգոր Ը Խանձողատ (1411—1418).**—«Տէր Գրիգորս, որ մականուն Խանձողաթ կոչի, աքսորեցին»<sup>178</sup>, «ի բերդ մի ամոր՝ որ և մեռաւ իսկ»<sup>179</sup>, որտեղ և թաղվում է: «Գրիգոր Խանձողաթ... յարեան ի վերայ նորա Սսեցիք՝ յետ կարոյ նորա

յիշխանութեան ամս Ե. և աքսորեցին զնան ի բերդ մի ամոր, որ և մեռաւ (1418), իսկ այլ ասի ի գաւազանագիրս ինչ թէ նաև նոգուլ սպանին զնան, գուցէ պատճառ լինելոյ վտանգելոյ ի հստառոս»<sup>180</sup>:

**85. Պողոս Բ Գառնեցի (1418—1430).**—Կոչվել է Արարացին, աշակերտել է Գրիգոր Տաթևացուն: Եղել է Երուսաղեմի հայոց պատրիարք (1413—1418 թթ.): Սսում լատինամել միաբանները թունավորումով սպանում են նրան 1480 թվին և թաղում Սսում: Հ. Մ. Չամչյանը միան հիշատակում է, որ 1430 թ. վախճանվեց Պողոս Բ կաթողիկոսը և չի նշում շիրմանելլը<sup>181</sup>:

**86. Կոստանդին Զ Վահկացի (1430—1438).**—Վախճանվել է Սսում և թաղվել այնուել:

(Ծարունակելի)

<sup>177</sup> Հ. Մ. Չամչյան, «Պատմություն Բայոց», Բ. Գ, էջ 457:

<sup>178</sup> «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարին Ժացոյ», Վաղարշապատ, 1896, էջ 435: (Հետ պատ Դավիթիցի):

<sup>179</sup> Չամչյանաթագաց, Բ. Ա., էջ 210:

<sup>180</sup> Հ. Մ. Չամչյան, «Պատմություն Բայոց», Բ. Գ, էջ 457:

<sup>181</sup> Նոյն տեղում, էջ 466: